պատահել է գիշերով: Աւելի քան հարիւր հոգի-ծերունիներ, երեխաներ, փախչելու կարողութիւն չունեցող մարդիկ, — այրոել են կրակի մէջ: Այս, թէեւ խիստ տխուր, լուրը ինձ ուրախութիւն պատճառեց: Հայոց-ձորը գոնեայ այժմ կը զգայ իր սխալը... նա երկար չէր ուզում մասնակից լինել ընդհանուր գործին... Բժշկութեան մասին մտածում են այն ժամանակ, երբ հիւանդն ընկած է»...

Վերջին տողերը կարդալու ժամանակ ես սարսափեցայ: Կարօի խստասրտութիւնն անցնում էր չափից: Աւելի քան հարիւր ծերեր, երեխաներ այրւում են հրդեհի բոցերի մէջ, նա ուրախանամ է, որովհետեւ այս դէպքից կարող էր նա օգուտ քաղել իր դիւական նպատակների համար, իսկ նպատակը՞, — դեռ ինձ յայտնի չէր:

«Մուշի եւ Բաղէշի կողմերից ոչինչ լուր չկայ: Դատոանի ռայիսը (տանուտէրը) գրում է՝ այստեղ ամէն ինչ պատրաստ է: Շատախում նոր վրդովմունք է ծագել ժողովրդի մէջ: Հոգոոց վանքի վարդապետը չէ դադարում իր վաղեմի նենգութիւններից: Ի՞նչ պէտք է անել այդ Վասակի հետ. ուղարկեցէք այնտեղ Մըհէին, իմ կարծիքով նրա գործն է հանգստացնել սեւագլուխ սատանայինե...

Մըհէն, ծերունի որսորդի գնացած գիշերի միւս առաւօտը, էլ չերեւաց: Քանի օրից յետոյ մենք լսեցինք հոգոոց վանքի վարդապետին իր խուցի մէջ սպանել են: Երկու օր չանցած, այս լուրը մեզ հասնելեն, կրկին յայտնոեցաւ Մըհէն:

«Ասլանին ուղարկեցի Բաղէշի եւ Մուշի կողմերը այնտեղի դրութիւնը իմանալու համար: Սագօն կ'անցնի Խնուսից դէպի Արզրում, Բայազեդ եւ կը վերադառնայ Խոյի ճանապարհով: Ջալլադը եւ Մուրադը գնացին Մոգաց եւ Սասնոյ կողմերը: Իւրաքանչիւրի համար նշանակոել է մի ամիս ժամանակ, իրանց ճանապարհորդութիւնը, հետազօտութիւնները եւ կարգադրութիւնները վերջացնելու համար: Ամէն մէկին ես տոել եմ հարկաւոր հրահանգները: Այսօր յուլիսի քսանն է, կնշանակէ, մինչեւ օգոստոսի քսանը բոլորը կրկին կը հաւաքոեն Բարդուղիմէոս առաքելոյ վանքումը, իրանց գործունէութեան համարը տալոէ:

Ջալլադը եւ Մուրադը այն երկու քրդստանցի տղամարդիկն էին, որոնց ես առաջին անգամ տեսայ արաբական մինարեթում: Դրանք այն օրից անյայտացած էին, իսկ այժմ երեւում էր, որ դարձեալ խառն էին Կարօյի գործերի մէջ: